ՆԱՎԱՍԱՐԻ ԺԱՅՌԱՊԱՏԿԵՐՆԵՐԸ

ԱՐԳԱՄ ԱՅՎԱԶՅԱՆ

Նախիջևանի գոգավորությունը, շնորհիվ իր բնակլիմայական և աշխարհագրական նպաստավոր պայմանների, դեռևս մ. թ. ա. III—I հազարամյակներում հայտնի է եղել որպես Հայաստանի նշանավոր երկրագործական ու անասնապահական օջախներից մեկը։ Նրա տարածքի տարբեր վայրերից՝ վաղեմի բնակատեղիներից ու բերդաքաղաքներից, պատահական հայտնաբերումների ու հնագիտական պեղումների շնորհիվ, կուտակվել են հնադարյան նյութական մշակույթի բազմազան իրեր ու առարկաներ։ Այդ տեսակետից գիտական կարևոր նշանակություն են ստացել Նախիջևանի աղի հանքի, Քյուլ թափայի, Կարմիր վանքի, Շարուրի դաշտի Շահթախտի (Բազավորանիստ), Գառերկալայի, Գողթնի Գիրան քաղաքի և այլ հնավայրերի նյութերը, որոնք իրենց զուգահեռներն ունեն Հայկական լեռնաշխարհի, Վրաստանի ու Ադրբեջանի մի շարք հնագիտական կենտրոնների նյութերի շարքում։

Նախիջևանի հնամենի մշակույթից մեզ հասած սկզբնաղբյուրներից են Զանգեզուրի լեռնաշղթայի Կապուտջուղ լեռնագագաթի Նավասար կամ Տապանասար լեռան վրա հայտնաբերված ժայռապատկերները։ Բարձրադիր (3200—3500 մ) լեռնանցքներով, զառիթափ լանջերով այդ լեռնագագաթը ծովի մակարդակից բարձր է 3906 մ և Փոքր Կովկասի ամենաբարձր կետն է։ Պալեոգենի գրանիտներից, մոնցոնիտներից և այլ քարատեսակներից կազմված լեռնագագաթն իր լանջերին ունի նաև ստվարաթիվ քարակարկառներ ու խորխորատներ։

Կապուտջուղի լեռնագագաթը, և առհասարակ Զանգեզուրի լեռնաշղթայի հարավային մասը, որ ավելի քան 96 կմ երկարությամբ Մալվարդ սարից ձգվում է մինչև Արաքս գետը, էապես տարբերվում է հյուսիսայինից (Մալվարդից մինչև Վայքի լեռնաշղթան)։ Այս հատվածում բարձրությունները ավելի մեծ են, և ինչպես Սյունիքի, այնպես էլ Նախիջևանի կողմում կան մի շարք լճակներ ու վտակներ, հանքային տաք աղբյուրներ, իսկ Սիսիանի լեռնանցքի մերձակայքում իշխում են տարատեսակ թփուտներն ու անտառապատ լանջերը։

Կապուտջուղը և նրա մերձակայքի լեռնագագաթները (Նավասար կամ Տապանասար, Կոնակոչ կամ Կռվանկոչ, Ղազարի սար, Սարի սուրբ Նշան, Աբանգեազ, Գալիս եմ-գալիս եմ, Ծակ քար, Մեսրոպ Մաշտոցի անձավ) իրենց ցրտաշունչ կլիմայով ու հրաբխավեր կազմվածքով դեռևս հեթանոսական շրջանից պաշտվել են հայ ժողովրդի կողմից։ Վերջիններիս հետ կապված հնամենի ակունքներ ունեցող մի շարք ավանդություններ ու առասպելներ[1], որոնք առ այսօր էլ պատմվում են Գողթնի (այժմ՝ Նախիջևանի ԻՍՍՀ, Օրդուբադի շրջան) բնակչության շրջանում, ապացուցում են, որ Կապուտջուղի

---

1 Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Երևան, 1969, էջ 12, 37, 169։

բարձունքները դեռևս խոր հնադարում եղել են մարդկային բնակատեղիներ և անքակտելիորեն կապված են հայկական իրականության հետ։

Նավասարդ կամ Տապանասարը Կապուտջուղի արևմտյան կողմի բարձունքն է, որի ստորոտում է գտնվում անհիշելի ժամանակներից հիմնված Գողթնի պատմական Մեսրոպավան, Մասրևան (այժմյան Օրդուբադի շրջանի Նասրվազ) գյուղը։ Նավասարի գագաթնամասերը բուսականությունից զուրկ են և նույնիսկ ամառվա ամիսներին գագաթնամերձ հատվածները տեղ-տեղ ծածկված են լիտում ձյան շերտերով։ Իսկ լեռան միջին և ստորին լանջերը պատած են ալպյան բուսականությամբ և լանջերն ի վար հոսում են մի շարք հորդառատ աղբյուրներ, որոնցից էլ գոյանում է 10—12 կմ երկարությամբ Մեսրոպավան գետակը։ Նավասարի «Խաչի աղբյուրի» ու «Գժի աղբյուրի» մերձակայքում և սարն ի վեր մեծ ու փոքր քարերի վրա քանդակված ժայռապատկերներից բացի, Կոնակոչ, Սարի սուրբ Նշան մատուռի սրածայր լեռան, Ղազարի սարի և այլ վայրերում կան նաև հնագույն բնակատեղիների հետքեր ու քարակույտեր, անձավներ ու դամբարանադաշտեր, որոնք և ապացուցում են այդ վայրերի վաղագույն շրջաններում արոտատեղիներ ու բնակատեղիներ լինելու հանգամանքները։ Այս ամենը վկայում է, որ Հայկական բարձրավանդակի մյուս շրջանների նման այստեղ ևս անատնապահության համար դեռևս նախնադարյան շրջանից օգտագործվել և յուրացվել են ալպյան ու վերալպյան արոտավայրերը և, բնականաբար, կան նյութական մշակույթի հետքեր։ Այդ տեսակետից ուշագրավ է այն փաստը, որ այժմյան Նախիջևանի ԻՍՍՀ տարածքը եզերող Զանգեզուրի և Վայքի լեռնաշղթաների փեշերին (ծովի մակարդակից 2000—3000 մ բարձրության վրա) գտնվում են բրոնզեդարյան մի շարք մեծ ու փոքր բնակատեղիներ ու բերդեր[2]։

Նավասարի ժայռապատկերները (նկ. 1—3, աղ. 1—5) գտնվում են լեռան արևմտյան փեշի, «Խաչի աղբյուրի» և «Գժի աղբյուրի» մերձակա տարածքում՝ որոշ տեղերում խմբերով, իսկ առանձին վայրերում՝ մեկուսի և սակավաթիվ։ Նախնադարյան մշակույթի այդ հնամենի պատկերները քանդակված են լեռան լանջին թափված հրաբխավեժ, կապարադույն ու սև, բնական փայլ ունեցող քարակարկառների ու քարաշեղջերի, ինչպես նաև առանձին ժայռերի վրա։ Ժայռապատկերները հիմնականում լավ են պահպանվել, բայց կան նաև արդեն հողմահարված ու քայքայված պատկերներ ու մասերամասներ։ Դրանց կատարման տեխնիկան կարելի է բաժանել երկու հիմնական խմբի՝ գծային և ծավալային։ Յուրաքանչյուր քարի վրա պատկերված են 1—12 և ավելի պատկերներ, որոնց փորվածքի միջին խորությունը կազմում է 3—4 մմ, իսկ գծերի լայնությունը հասնում է մինչև 15—20 մմ-ի։ Տեղում կատարած մեր հետազոտությունները և Նավասարի ժայռապատկերների արվեստի հա-

---

2 Այդ գոտու մի հուշարձանի մասին տե՛ս Ա. Այվազյան, Նախնադարյան կայան Նախիջևանի ԻՍՍՀ հյուսիսում («Բաներեր Երևանի համալսարանի», 1974, № 3, էջ 238—241)։ Այս հոդվածում «Քարե տուն» կամ «Հին տուն» ժայռակոփ քարայրի արտաքին մասում քանդակված և խիստ քայքայված արձանագրության որոշ տառերից երևելով, մատնանշել ենք նրա հունական լինելը։ Սակայն հետագայի մեր ուսումնասիրությունները ապացուցեցին, որ այդ արձանագրությունը հայերեն է և հուշարձանի վրա քանդակվել է XII—XIV դդ.։ Այդ փաստի անհերքելի ապացույցը արձանագրության՝ 1933 թ. կատարված մի լուսանկարի նեգատիվն է, որը պահպանվում է Հայաստանի պատմության պետական թանգարանի նեգատիվների ֆոնդի 5745 համարի տակ։

Ч4. 1.

Ч4. 2.

մագրական համեմատությունը Անդրկովկասի, ինչպես նաև ՍՍՀՄ-ի տարածքում[3] հայտնաբերված ժայռապատկերների ու վաղ շրջանի նյութական մշա-

Նկ. 3.

կույթի հուշարձանների հետ ապացուցում է, որ Նավասարի ժայռապատկերների թեման հիմնականում վերարտադրում է Հայաստանի կենդանական աշ-

---

3 Ս. Սարդարյան, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Երևան, 1967, էջ 113—122, Գ. Կարախանյան, Պ. Սաֆյան, Սյունիքի ժայռապատկերները, Երևան, 1970, Հ. Մարտիրոսյան, Հ. Իսրայելյան, Գեղամա լեռների ժայռապատկերները, Երևան, 1971, Հ. Մարտիրոսյան, Հայաստանի նախնադարյան նշանագրերը և նրանց ուրարտա-հայկական կրկնակները, Երևան, 1973, Հ. Մարտիրոսյան, Գիտությունն սկսվում է նախնադարում, Երևան, 1978: И. Джафарзаде, Наскальные изображения Кобустана («Археологические исследования в Азербайджане», Баку, 1965, с. 15—28); Նույնի՝ Кобустан, Баку, 1973; А. Формозов, Памятники первобытного искусства на территории СССР, М., 1980; «Звери в камне» (сборник). Новосибирск, 1980; А. Окладников, Петроглифы верхней Лены, Л., 1977; Նույնի՝ Петроглифы Центральной Азии, Л., 1980; Նույնի՝ Петроглифы Горного Алтая, Новосибирск, 1980

խարհի մի շարք ներկայացուցիչների. բարձրեղջյուր քարայծ, եղջերու, արջ, վայրազ, օձ, կարիճ և այլն, որոնք համապատասխանում են կապուտջուղում առկա կենդանիների կազմին և բնորոշ են Նախիջևանի ու Սյունիքի կենդանական աշխարհին։ Պատկերների թվում էական տեղ են գրավում որսի տեսարանները, մարդկանց, սայլերի, թակարդների, օղապարանների, նետ ու աղեղի, երկրաչափական զանազան նշանների, տիեզերական և այլ պատկերացումներին վերաբերվող ժայռապատկերները։

Աղյուսակ 1.

Նավասարի մի շարք պատկերանշանների հար և նման օրինակների հանդիպում ենք ինչպես Սյունիքի, Գեղամա լեռների և Հայաստանի տարածքի մյուս վայրերի ժայռապատկերներում, այնպես էլ հայկական հիերոգլիֆիկ նշանների շարքում։ Այսպիսի գաղափարանշաններից են խաչ, աղեղնավոր, ժառանգ, մարդ, հյուսիս, աստիճան, աղբյուր և այլ գաղափարագրերը, որոնցից մի քանիսը պատկերված են ժայռապատկերների մեր ընդօրինակումների № 1—5 աղյուսակներում[4]։ Նավասարի մի շարք ժայռապատկերներում մատնանշված են նաև լեռան վրա գտնվող աղբյուրների ու վտակների, լճակների

[4] Մեր 1-ին աղյուսակի № 4, 5, 6, 2-րդ աղյուսակի № 7, 3-րդ աղյուսակի № 1, 3, 8, 4-րդ աղյուսակի № 2, 6, 5-րդ աղյուսակի № 5 ժայռապատկերների գաղափարանշանները համեմատեք Հ. Մարտիրոսյանի աշխատության № 7 (ըստ Ա. Աբրահամյանի կազմած), 8, 9, 15, 21, 25, 30, 31, 35ա աղյուսակների գաղափարանշանների հետ։

և այլնի տեղագրությունները։ Այդ տեսակետից, օրինակ, հետաքրքիր է № 3 աղյուսակի 6-րդ պատկերը, որը մատնանշում է Նավասարի գագաթնամերձ ձորակում մինչ այժմ առկա երեք փոքրիկ լճակները և դրանցից սկզբնավորվող Մեսոպոտամիական գետակի ակունքը։

Նավասարի ժայռապատկերների բովանդակության և թեմատիկայի ուսումնասիրությունը ապացուցում է, որ դրանք ժամանակագրական առումով, քանդակման եղանակով ու մի շարք այլ զուգահեռներով հար և նման են Նավասարից ոչ այնքան հեռու գտնվող Սյունիքի (Հերմաջուր հնավայր, Ուղտա-



Աղյուսակ 2.

Աղյուսակ 3.

սար), Որոտան, Արփա գետերի ակունքների մերձակա լեռնապարերի վրա գտնվող, Գեղամա լեռների, Արագածի, ինչպես նաև Անդրկովկասի, Սիբիրի և այլ վայրերի ժայռապատկերներին, որոնք թվագրվում են V—II հազարամյակներով։

Նավասարի և նրա մերձակա լեռների լանջերին գտնվում են նաև հին շրջանի բնակատեղիների հետքեր և դամբարանադաշտեր։ Այդ վայրերից արժանահիշատակ են հատկապես Ղազարի սար լեռան փեշին, Գողթնի պատմական Շրջու կամ Սրջու գյուղատեղի մոտ գտնվող բնակատեղին ու դամբարանադաշտը, որոնք մեր կարծիքով կարելի է թվագրել մ. թ. ա. II—I հազարամյակներով։ Ուշագրավ է նաև «Գծի աղբյուրի» մերձակայքում, ժայռապատկերներով քարակարկառների մեծ խմբի մոտ գտնվող դամբարանադաշտը։ Վերջինս բավական ընդարձակ է և ունի ավելի քան 100 դամբարան։ Հետաքրքրական են Կոնակոչի Մեսրոպ Մաշտոցի անձավը, Ղազարի սարի հարավարևմտյան լանջի, Ծակ քարի և Նավասարի մերձակայքում գտնվող այլ քարայրեր, որոնք մարդկանց համար ծառայել են որպես հուսալի կա-

ցարաններ։ Վերջիններիս մի մասի մերձակայքում գտնվող դամբարանների, դրանց հատակների կավաավազային նստվածքների հետքերը վկայում են դրանց բնակատեղիներ լինելու հանգամանքները։ Այդ ամենը խոսում են այն մասին, որ պատմական Գողթն գավառի բարձրադիր բնակատեղիների մեծ մասը նստակյաց կյանքի բնօրրաններ են եղել դեռևս խորը հնադարից և նշանակալից դեր են խաղացել տեղաբնիկների կյանքի ու մշակույթի ձևավորման գործում։

Աղյուսակ 4. Աղյուսակ 5.

Նավասարի ժայռապատկերները 1970 թ. ուսումնասիրվում են Ադրբեջանի գիտությունների ակադեմիայի Նախիջևանի գիտարշավի կողմից։ Սակայն մամուլում հրապարակված մի քանի գիտամասսայական, ինֆորմացիոն հոդվածները ցույց են տալիս, որ ժայռապատկերներով զբաղվող որոշ հեղինակներ այն ներկայացնում ու մեկնաբանում են քմահաճ և յուրովի։ Այլապես ինչով բացատրել, որ պատմական գիտությունների թեկնածու Վ. Ալիևը Նավասարի ժայռապատկերները կտրում է նրա շրջակայքում (Նկատի ունենք Սյունյաց և Վայոց Ձորի լեռնաշխարհը) եղած համանման մի շարք հուշարձաններից. որոնց նյութերը հայտնի են գիտական աշխարհին, և դրանք միմիայն նմանեցնում է Բաքու քաղաքի մերձակայքում հայտնաբերված Կոբստանի, Ապշերոնի և Քալբաջարի ժայռապատկերներին և ժամանակագրական տեսակետից դրանց մի մասը համարում է մ. թ. ա. II—I հազարամյակների աշխատանքներ, իսկ մի մասն էլ վերագրում է մ. թ. առաջին և միջին դարերին[5], ի միջի այլոց, ինչպես Վ. Ալիևը, այնպես էլ մյուս հոդվածագիրները, նույնիսկ անտեսելով լեզվական տառադարձման տարրական պահանջ-

[5] В. Элиев, Бир даҳа „Кәмигаја" рәсмләри һаггында („Азәрбајҹан кәнҹләри", 28.XII, 1971); В. Алиев, Наскальные изображения Гемиган («Краткие сообщения», 148, М., 1977, с. 50—52).

ները. Նավասար կամ Տապանասար տեղանունը թարգմանելով ադրբեջաներեն, այն կոչում են Դամիգայա։

Անհմաստ ու հակագիտական են բանասիրական գիտությունների թեկնածու Աբուլֆազ Հուսեինի Ասլան-օղլիի Նավասարի ժայռապատկերների վերաբերյալ հրապարակած գիտամասսայական հոդվածները։ Վերջինս շրջանցելով և անտեսելով մասնագիտական դրականության հարուստ նյութերը, «Տեխնիկա մոլոդյոժի» ամսագրում հրատարակված իր հոդվածում, մի շարք մերժելի մեկնաբանությունների հետ մեկտեղ, Նավասար, Կապուտջուղ և այլ տեղանուններին, ժայռապատկերներին և առանձին իմաստաբանական նշաններին ու պատկերներին տալիս է գիտության հետ ոչ մի առնչություն չունեցող, հետևապես և սնանկ ու անհիմն բացատրություններ։ Հոդվածագիրը Նավասարի մի քանի նշանների ու պատկերների թվում «տեսնում» է հին թուրքական այբուբեների տառեր, իսկ ժայռապատկերների ու նշանների մի մասը համարում է «արձանագրություններ» և այդ այբուբենի միջոցով «ընթերցում» դրանք։ Ավելորդ ենք համարում մանրամասն անդրադառնալու հոդվածագրի հարցադրումներին, քանի որ ամսագրի հենց նույն համարում Ա. Հուսեինի Ասլան-օղլիի հոդվածի մեկնաբան, պատմաբան Ֆ. Դամինովը տվել է ճիշտ և սպառիչ գնահատական։ Վերջինս իրավացիորեն նշում է. «Ցավոք, հեղինակի շատ ենթադրություններ թվում են բիչ հիմնավոր։ Առաջին հերթին հեղինակը բոլորովին ոչինչ չի հաղորդում պատկերների և «արձանագրությունների» թվագրման եղանակի և մեթոդի մասին... Հեղինակը որոշում է օրդուբադյան պատկերների տարիքը 7 հազար տարով..., բայց միևնույն ժամանակ ասում է, որ «Դամիգայայի արձանագրություններում հանդիպում են հին թուրքական այբուբենի շատ տառեր և էլեմենտներ»։

Սակայն հին թուրքական runիկան, այսպես կոչված «Օրխոնո-ենիսեյյան» գիրը, ստեղծվել է VI—VII դդ. ...Հարավային Սիբիրի ու Կենտրոնական Ասիայի շրջաններում և սելջուկների Ադրբեջան (Անդրկովկաս—Ա. Ա.) մտնելու (XI դ. կես) և նրա տարածքի հայտնի հին պետությունների՝ Կովկասյան Աղվանքի ու Ատրպատականի նվաճելու ժամանակ այդ գրերը դուրս էին եկել օգտագործումից։ XI—XIII դդ. այստեղ հին տեղական լեզուն (ազերականը) փոխվում է թուրքականով։ Այնպես որ «կարդալ» արձանագրությունները, ելնելով հին թուրքական runիկայից, նույնն է, ինչ «կարդալ» էտրուսկյան գրերը օգտվելով գուլուսների լեզվից...

Պատկերները, որոնք հեղինակը դիտում է որպես «հրթիռներ և սաղավարտներով մարդիկ հիշեցնող», «ինչ-որ տիեզերական դիպվածի մասին» պատմող, «զանազան կառույցների գծագրեր», «ինչ-որ բարդ կոնստրուկցիաների՝ նման ժամանակակից հրթիռների, տիեզերանավերի, անտենաների և այլ անհասկանալի սարքավորումների ուրվագծեր, հուշված են, ինչպես ինձ թվում է, գիտաֆանտաստիկ գրականությամբ։ Նման կապակցումներ, իհարկե, կարող են առաջանալ, բայց դրանք թերևս հեռու են խիստ գիտական իմացությունից»[7]։

---

[6] А. Гусейни Аслан—оглы. Эрмитаж каменного века («Техника молодежи», 1972, № 5, с. 50—53).

[7] Г. Даминов. Дорога мудрости длинна... («Техника молодежи», 1972, № 5, с. 54).

НАСКАЛЬНЫЕ ИЗОБРАЖЕНИЯ НАВАСАРА

АРГАМ АЙВАЗЯН

Резюме

Одним из древнейших первоисточников нахичеванской культуры являются наскальные изображения горы Навасар или Тапанасар.

Некоторые исследователи комментируют эти изображения самовольно и антинаучно. Например, кандидат филологических наук А. Гусейни Аслан-оглы пытается «доказать», что в них есть буквы и элементы древней тюркской письменности, в то время как они изображают представителей животного мира, характерного для древнеармянских областей Сюник и Нахичеван.